10.53587/25792865-2024.12-55

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լազարյան Ա.Ա.

ՀՀ արդարադատության նախարարություն,
Երևան, Հայաստան

Քրեակատարողական հիմնարկներում կատարված հանցագործությունների բացահայտման, ինչպես նաև պենիտենցար հանցավորության դեմ պայքարի ոլորտում ահռելի դեր է կատարում օպերատիվ-հետախուզական գործունեությունը:

Հոդվածում վերլուծվել են քրեակատարողական հիմնարկներում անցկացվող օպերատիվ-հետախուզական գործունեության վերաբերյալ առկա իրավական կարգավորումները: Համառոտ ներկայացվել են դրանց առանձնահատկությունները, որոնք առավելապես պայմանավորված են թե՛ նշված հաստատությունների ռեժիմային առանձնահատկություններով, թե՛ այնտեղ պահվող անձանց ունեցած կարգավիճակային (դիրքային) առանձնահատկություններով:

Հոդվածում հատուկ ուշադրություն է դարձվում քրեակատարողական հիմնարկներում օպերատիվ-հետախուզական գործունեության իրավական ապահովման տեսական դրույթներին: Գնահատական է տրվում դիտարկվող գործունեության ոլորտի իրավական ապահովման ներկայիս վիճակին:

Բանալի բառեր. *քրեակատարողական հիմնարկ, օպերատիվ-հետախուզական, միջոցառում, գաղտնի և բացահայտ միջոցներ, օպերատիվ սփորաբաժանում:*

Հացավորության դեմ պայքարի շրջանակներում անգնահատելի է օպերատիվ-հետախուզական գործունեության դերը: Օրենսդրական կարգավորումների համաձայն՝ օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական և հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից գաղտնի և բացահայտ մեթոդների ու միջոցների կիրառմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստումը, իրականացումը և արդյունքների ամրագրումն ու իրացումն է:

Օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտը կարգավորող միակ ճյուղային նորմատիվ իրավական ակտի՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 8-րդ կետերի համադրված վերլուծությունից բխում է միայն, որ օպերատիվ-հետախուզական գործունեության (այսուհետ նաև՝ ՕՀԳ) նպատակներից են ինչպես քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեության ապահովումը և քրեակատարողական հիմնարկներում նախապատրաստվող հանցագործությունների նախազգուշացումը,

Թղթակցական հասցեն՝ Լազարյան Արփի Աշոտի, ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցորդ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության, քրեական և քրեադատավարական օրենսդրության մշակման բաժնի պետ, Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս, Հեռ.՝ +374 99070555, e-mail: arpi.lazaryan@moj.am

կանխումը և բացահայտումը, այնպես էլ հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը, հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը, ինչպես նաև վկաների, հանցագործության հետքերի, առարկաների, իրեղեն ապացույցների և այլ իրերի, փաստաթղթերի հայտնաբերումը:

Նշված օրենքի կարգավորումների համաձայն՝ քրեակատարողական ծառայությունը՝ (որի ներքո, ըստ էության, հասկացվում է Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը՝ ի դեմս համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման) օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու և քրեական վարույթի շրջանակներում օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հետաքննություն կատարելու իրավունք ունի միայն քրեակատարողական հիմնարկներում:

Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 73-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացնելու լիազորությունը տրված է **քրեակատարողական հիմնարկների օպերատիվ ստորաբաժանումներին,** ինչպես նաև իրենց իրավասության սահմաններում նման լիազորություններով օժտված այլ մարմիններին:

Չնայած, որ քննարկվող ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտը միասնական է, սակայն ՕՀԳ իրականացնող սուբյեկտ համարվող յուրաքանչյուր գերատեսչության աշխատանքն ունի իր առանձնահատկությունները, որոնք ինչպես ունեն հոգեբանական, այնպես էլ՝ կազմակերպչական և այլ բնույթ: Դրանց շարքին են դասվում նաև սահմանադրական-իրավական առանձնահատկությունները, որոնք բնորոշ են քրեակատարողական հիմնարկներում անցկացվող օպերատիվ-հետախուզական գործունեությանը [1]:

Միաժամանակ, քրեակատարողական հիմնարկներում մեր կողմից կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ դրանցում քաղաքացիների, կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից կատարված հանցագործությունների դեպքերը զգալիորեն աճել են, մասնավորապես՝ 2019 թվականին քրեակատարողական հիմնարկներում քաղաքացիների, կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից կատարված հանցագործությունների դեպքերով հարուցվել է 101 քրեական գործ, որոնց մեծ մասը՝ մոտ 70%-ը, Հայաստանի Հանրապետության քրեական նախկին օրենսգրքի 266-րդ (թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը) և 268-րդ հոդվածներով (թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի): Իսկ արդեն 2020 թվականին քրեակատարողական հիմնարկներում քաղաքացիների, կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից կատարված հանցագործությունների դեպքերով հարուցվել է 128 քրեական գործ, որոնց մեծ մասը՝ մոտ 80%-ը, կրկին Հայաստանի Հանրապետության քրեական նախկին օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով: 2021 թվականի քրեակատարողական հիմնարկներում քաղաքացիների, կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից կատարված հանցագործությունների դեպքերով հարուցվել է 100 քրեական վարույթ, որոնցից կրկին մեծամասնությունը՝ 90%-ը, Հայաստանի Հանրապետության քրեական նախկին օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածներով: Վերջին հինգ տարիների ընթացքում քրեակատարողական հիմնարկներում գրանցված հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացնում ենք աղյուսակի տեսքով (տե՛ս՝ գծապատկեր 1):

Միաժամանակ հարկ է նկատել, որ 2024 թվականի 1-ին կիսամյակի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում գրանցվել է 217 հանցագործության դեպք:



Գծապատկեր 1. Քրեակատարողական հիմնարկներում գրանցված հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Ըստ այդմ, կարող ենք հստակ արձանագրել, որ ներկայումս քրեակատարողական համակարգի առջև ծառացած խնդիրներից են կանոնակարգի, իրավակարգի և օրինականության պահպանումը պատիժ կատարող հիմնարկներում, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց, այդ հիմնարկների անձնակազմերի (ծառայողների, աշխատակիցների) և այնտեղ գտնվող այլ անձանց անվտանգությունն ապահովելը, ինչպես նաև նոր հանցագործությունների կատարումը կանխարգելելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեակատարողական հիմնարկներում գրանցվում է հանցավորության աճ, ընդ որում՝ կատարված հանցագործությունների մեծամասնությունը կապված է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ, որն իրենից ենթադրում է նաև այլ անձանց ներգրավում հանցանքի կատարմանը, անհերքելի է մնում օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման կարևորությունը: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը, որպես պետական համակարգի մարմինների կողմից իրականացվող գործունեության հատուկ տեսակ, պետք է համապատասխանի մի շարք չափանիշների, մասնավորապես՝ գաղտնիության, հնարավորինս թաքցված և քողարկված գործունեության, ինչպես նաև հատուկ մասնագիտացվածության և կազմակերպվածության [2]: Այդ ամենի հետ մեկտեղ քրեակատարողական հիմնարկներում ՕՀՄ-ների անցկացումն ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են ինչպես քրեակատարողական համակարգը կանոնակարգող և օպերատիվ-հետախուզական գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերով, այնպես էլ հատուկ ռեժիմային գոտում (ինչպիսին հանդիսանում է քրեակատարողական հիմնարկի տարածքը) իրականացվելու հանգամանքով:

Օրենքի և Օրենսգրքի համադրված վերլուծության արդյունքում կարելի է վեր հանել մի շարք իրավական խնդիրներ, որոնք հիմնականում հանգեցնում են հետևյալ դատողություններին.

1. Ակնհայտ հակասություն կա այն սուբյեկտների շրջանակի հետ կապված, որոնք լիազորված են իրականացնել ՕՀԳ քրեակատարողական հիմնարկի տարածում, մի կողմից՝ Օրենքի կարգավորումների համաձայն՝ դա Քրեակատարողական ծառայության լիազորությունների դաշտում է, մյուս կողմից՝ Օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ քրեակատարողական հիմնարկների օպերատիվ ստորաբաժանումները, որոնք,

«Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում դադարեցրել են իրենց գործողությունը [3]:

2. Քրեակատարողական հիմնարկներում իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերը կրում են դեկլարատիվ բնույթ [4]: Մասնավորապես, Օրենքի 16-րդ հոդվածում, որտեղ թվարկված են 16 ՕՀՄ-ների տեսակները, սահմանափակվում է միայն նշելով, որ Քրեակատարողական ծառայության մարմիններն իրավունք ունեն անցկացնելու թվով 13 միջոցառումներ: Միաժամանակ, ոչ Օրենսգրքում, և ոչ էլ որևէ այլ իրավական ակտում նշված չեն այն առանձնահատկությունները, որոնք կարող են առաջանալ տարբեր միջացառումների անցկացման ժամանակ, կապված թե՛ այն անձանց շրջանակի հետ, որոնց նկատմամբ դրանք իրականացվում են, թե՛ այն տարածքի հետ, որում դրանց անցկացվում են: Հաշվի առնելով այս հանգամանքը, Օրենքի կարգավորումների համաձայն՝ Քրեակատարողական ծառայությունը ՕՀԳ իրականացնող մարմին է քրեակատարողական հիմարկի տարածքում, ապա խնդրահարույց է մնում այն հարցը, թե որտեղ է սկսում և ավարտվում այդ տարածքը: Միակ ենթաօրենսդրական ակտը, որով որոշակի առումով տրված է ձևակերպում, որով կարելի է եզրահանգում կատարել քրեակատարողական հիմարկի տարածքի մասով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պահպանության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» N 195-Ն որոշումն է, որի 4-5-րդ կետերի համաձայն՝ արգելագոտի է համարվում արգելափակված, նախազգուշացնող նշաններով կահավորված, հիմնական արգելապատին կից գոտի, որտեղ դատապարտյալների, կալանավորված և կողմնակի անձանց գտնվելը արգելվում է, իսկ պահպանության սահմանագիծը արգելագոտու հիմնական պատը, տրանսպորտային միջոցների՝ վագոնի, ավտոմոբիլի, օդանավի, ինչպես նաև նավախցի կամ նավասենյակի պատերը, դռները, հատակը և առաստաղը, շարժական լարափակոցներով կամ նախազգուշացնող գրառումով՝ «Արգելագոտի, մուտքն արգելված է», աշխատանքային կամ արտադրական տեղամասերը, պահախմբով հետիոտն ուղեկցորդելիս՝ շարքից մինչև մոտակա ուղեկցողը եղած տարածությունը, շարասյան առջևից և հետևից ուղեկցորդելու դեպքում՝ շարասյան շրջակայքը՝ յոթ մետր հեռավորությամբ:

3.Հարկ է նկատել, որ ներկայումս իրավունքի տեսության մեջ շատ է քննարկվում այն հարցը, որ օպերտատիվ-հետախուզական գործունեության ճյուղային օրենսդրության կարգավորումները, որոնք վերաբերում են պատժի կատարմանը բացառապես քրեակատարողական հիմնարկներում և դրանից դուրս են մնում այն անձինք, ովքեր դատապարտված են ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակների: Արդյունքում, օպերատիվ դիտարկումից և հսկողությունից դուրս են մնում դատապարտյալների շրջանում քրեաիրավական առումով վտանգավոր անձինք, որոնք պարզապես չեն գտնվում քրեակատարողական հիմնարկի տարածքում [5]:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ ենք համարում նշել, որ քրեակատարողական հիմնարկներում իրականացվող օպերատիվ-հետախուզական գործունեության իրավական ապահովման, ինչպես նաև գործնական կիրառման խնդիրներն այսքանով չեն ավարտվում: Միաժամանակ ընդգծելով քննարկվող գործունեության կարևորությունը և դրա շուրջ առկա իրավական խնդիրները՝ կարծում ենք, որ համապատասխան օրենսդրական փոփոխությունների շրջանակներում պետք է դիտարկել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» նոր օրենքի նախագծում այնպիսի կարգավորումների նախատեսումը, ինչը կկարգավորի կոնկրետ ռեժիմային գոտում կատարվող ՕՀԳ

առանձնահատկությունները՝ հաշվի առնելով թե՛ այնտեղ պահվող անձանց դատավարական կարգավիճակի առանձնահատկությունները, թե՛ ՕՀԳ իրականացնող տարբեր մարմինների լիազորությունների շրջանակը և փոխգործակցության սահմանները, ինչպես նաև այն տարածքի առանձնահատկությունները, որտեղ դրանք կատարվում են: Կարծում ենք, որ իրավական կարգավորումների կատարելագործումը կարող է արդյունավետ լինել և օգնել պենիտենցար հանցավորության նվազման ուղղությամբ պետության կողմից իրականացվող քաղաքականությանը:

Գրականության ցանկ

1. Дугенец А.С. , Юнусов Э. А., Конституционно-правовые аспекты оперативно-розыскной деятельности в исправительных учреждениях, 2019.
2. Исиченко А. П. «Оперативно-розыскная деятельность в исправительных учреждениях» Научная электронная библиотека «КиберЛенинка», 2012.
3. Нормы уголовно-исполнительного законодательства, регламентирующие оперативно-розыскную деятельность: научно-практический комментарий. М., 2015.
4. Теория оперативно-розыскной деятельности/ под ред. Горяинова К.К., Овчинского В.С., Синилова Г.К., 5-е изд., Владимир, 2005.
5. Никифоров Л.В. Правовое положение учре-ждений и органов ФСИН России в уголовном судо-производстве//Юридические науки: проблемы и перспективы: материалы Междунар.науч.конф. (г. Пермь, март 2012 г.). – Пермь: Меркурий, 2012.

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО ОБЕСПЕЧЕНИЯ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В УЧРЕЖДЕНИЯХ И ОРГАНАХ, ИСПОЛНЯЮЩИХ УГОЛОВНЫЕ НАКАЗАНИЯ

Лазарян А.А.

Оперативно-розыскная деятельность играет огромную роль в деле раскрытия преступлений, совершаемых в пенитенциарных учреждениях. В статье проанализированы существующие правовые нормы, касающиеся оперативно-розыскной деятельности, проводимой в пенитенциарных учреждениях. Кратко представлены особенности, которые во многом определяются как режимными особенностями упомянутых учреждений, так и статусными особенностями лиц, содержащихся в пенитенциарных учреждениях.

В статье особое внимание уделено теоретическим положениям правового обеспечения оперативно-розыскной деятельности в учреждениях исполнения наказаний. Дана оценка современного состояния правового обеспечения рассматриваемой сферы деятельности.

Ключевые слова: *пенитенциарное учреждение, оперативно-розыскные мероприятия, гласные и негласные методы, правовые нормы.*

SOME FEATURES OF LEGAL SUPPORT OF OPERATIVE SEARCH ACTIVITIES IN CRIMINAL INSTITUTIONS

Lazaryan A.

The operational-search activity plays an important role in solving crimes committed in penitentiary institutions. This article analyzes the existing legal norms concerning operational-search activities conducted within penitentiary institutions. It briefly outlines the features that are largely determined by both the regime characteristics of these institutions and the legal status of individuals held in penitentiary institutions.

The article gives special attention to the theoretical aspects of legal support for operational-search activities in correctional institutions. It provides an assessment of the current state of legal regulation in this field of activity.

***Keywords**: penitentiary institution, operational-search measures, overt and covert methods, legal norms.*

Ներկայացվել է խմբագրության 17.10.2024
Ընդունվել է տպագրութան 22.11.2024